ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ

Պատմությունը իրադարձությունների մի հարատև շղթա է, իրադարձություններ, որոնք իրենց ներունակությամբ, ներքին բովանդակությամբ և վճռադրոշմ կնիքով ժամանակ առ ժամանակ գալիս են խոսելու սերունդների հետ և հավերժորեն ներկա գտնվելու նրանց կյանքում ոչ միայն որպես հիշողություն, այլ նաև ապրելու եղանակ:

Այս օրերին մեր ազգային-եկեղեցական կյանքում տեղի են ունենում դեպքեր, որոնց թերևս մենք՝ այսօրվա ապրողներս, չկարողանանք ամբողջական և իրական գնահատական տալ, բայց ժամանակները անաչառ ու անշահախնդիր կերպով կպարզեն և ըստ արժանվույն կգնահատեն դրանք:

Մեր կյանքի վերարժևորման մի շրջանում ենք ապրում այսօր: Ինքնաքննությամբ փորձում ենք պատմության էջերից դուրս բերել և մեր այսօրվա կյանքի հետ միաշաղախել անցյալի արձանագրությունները՝ փորագրելով մեր հոգիների վրա և կենդանի գրություններ դարձնելով գալիքի համար:

«Աստված է, որ մեզ պատրաստում է այս փոփոխությանը, նա, որ տվեց մեզ Հոգու առհավատչյան» (Բ Կորնթ. Ե 5): Պողոս առաքյալն է խոսում մեզ հետ, իսկ մենք կենդանի վկայողներն ենք այս խոսքերի: Ակնատեսներն ու արձանագրողներն ենք այնպիսի ակնթարթների, որոնք իրենց մեջ խտացնում են անցյալի պատմությունն ու դառնում հավերժության պատուհան ապագայի համար.

Խորեն Ա Մուրադբեկյան նահատակ Հայրապետի աճյունի փոխադրություն և հազարամյակի վերջին Մյուռոնօրհնությունը՝ տրամաբանական հաջորդականությամբ թվագրված 7 և 8 սեպտեմբերի:

«Աստված է, որ մեզ պատրաստում է այս փոփոխությանը...».

Սեպտեմբերի 7... Գարեգին Վեհափառի իմաստուն որոշումով, անցյալի աստվածամարտ և հավատախեղդ քաղաքականության զոհը դարձած Խորեն Ա նահատակ Հայրապետի աճյունը Սուրբ Գայանե վանքի իր հանգստարանից փոխադրվեց Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հովանու ներքո հանգչելու՝ արժանի տեղ գտնելով իր նախորդների կողքին:

Ապրելով ամենածանր ժամանակներում, Խորեն Վեհափառը երբեք էլ չընկրկեց և որպես «քաջ հովիվ» իր արյամբ լույսի և հույսի մի ճառագայթ արձակեց խավար ու մթամած օրերի մեջ՝ դառնալով **նոր Գողգոթայի Նոր Խաչեցյալը**՝ իր անձի մեջ թանձրացնելով ժողովրդի ցասումն ու տառապանքը: Իրեն վստահված **բանալիները** չզիջեց՝ կանխազգալով ազգի **հոգևոր գանձատան** կողոպուտը, որի համար ստիպված եղավ կյանքով վճարել և զոհաբերվել Աստծո փառքի տարածման և ժողովրդի ազատության համար: Եվ որքա՜ն անշուք էր նաև նրա հուղարկավորու-

թյունը: Սարսափի և վախի «ուրվականների հսկողությամբ» մի քանի հավատարիմ կանայք քաջությամբ հանձն առան անպատվությունից և ապականությունից փրկելու Հայրապետի անշնչացյալ մարմինը՝ ոչ թե թաղելով, այլ պարզապես թաքցնելով Սուրբ Գայանե վանքի հարևանությամբ գտնվող հասարակաց գերեզմանատանը: Ապա ժամանակ առ ժամանակ Գևորգ Զ և Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետների օրերին հանգրվան առ հանգրվան փոխադրվելով զետեղվեց Սուրբ Գայանե վանքի գլխավոր մուտքի մոտ: Եվ կարծես այդքան տառապանք, աքսոր, հալածանք տեսած և այս ամենի գագաթը հանդիսացող նահատակությամբ կյանքը կնքած Հովվապետի գերեզմանի համար նույն դեգերումներն էին սահմանված: Բայց այդ շիրիմը յուրահատուկ խորհուրդով ժամանակների հարացույցը հանդիսացավ. որքան պարզվում էր մեզը, այնքան այն առաջանում էր ավելի հաղթանակած և ավելի արժանի գնահատմամբ: Իսկ այսօր վերջնականապես լուսավորված Մայր Աթոռի Գահակալը՝ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, եկեղեցական մեծ թափորով և բազմաթիվ հավատացյալների ուղեկցությամբ իր իսկ ձեռքերով հոգելույս Հայրապետի աճյունը ամփոփեց և հաստատեց Մայր Տաճարի հովանավորությամբ. «արժան և իրաւ»: Տեղի ունեցածը սոսկ աճյունի տեղափոխություն չէր, այլ պարփակումը իր մեջ ժամանակների փոփոխության խորհրդի՝ «ի մահուանէ ի կեանս և յապականութենէ յանապականութիւն»: Խորհրդանշանակորեն, գերեզմանի կնքումով երանաշնորհ Հայրապետը իր հետ տարավ դժնի ժամանակների իր հոտի տառապանքներն ու ցավերը և իրե՛ն հատուկ կերպով վերջ դրեց նենգությանն ու կեղծիքին՝ վերածվելով նոր կյանքի լուսաշող ուղենիշի:

Եվ այս բոլորի բարձրակետը հանդիսացավ աճյունի տեղափոխության հաջորդ օրը տեղի ունեցած Սրբալույս Մյուռոնի օրհնության առիթով Գարեգին Վեհափառի արտասանած խոսքը, որն ամենամեծ ընծան էր նահատակ Հայրապետին հիշատակին. *«Նա չունեցաւ Հայց. Եկեղեցու աւանդութեան և իր կաթողիկոսական աստիճանին ու պատուին համապատասխան թաղում: Իր կաթողիկոսութեան վեց տարիներին նա չունեցաւ ո՛չ մի առիթ և ո՛չ մի ազատութիւն կաթողիկոսական իշխանութեան միայն յատուկ իր պարտականութիւնը՝ Միւռոնօրհնէքը կատարելու: Հայաստանի ազատ ու անկախ մեր նոր Հանրապետութեան այս առաջին հնգամեակին, մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վայելած ազատութեան և վերածաղկումի այս նո՛ր շրջանին, իմ կատարած այս առաջին Միւռոնօրհնէքը ես ընծայում եմ որպէս խունկ բուրումնաւէտ նրա պայծառ և ճաճանչող յիշատակին, որ վստահաբար լինի ներշնչման անսպառ և կենսարար աղբիւր մեր նո՛ր հոգևորականութեան և հոգեպէս ու ազգապէս ու պետականօրէն վերանորոգուող մեր ժողովրդին, յատկապէս նոր սերնդին:*

Թող իր շիրիմը լինի մի նոր և պայծառաձուն դողանք հոգևոր այս «Անլռելի Զանգակատուն»ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին»:

«...Նա, որ տվեց մեզ Հոգու առհավատչյան».

Սեպտեմբերի 8... Դարի վերջին Մյուռոնօրհնությունը կատարվեց այս

առավոտ՝ Աստծո Հոգու ներկայության առհավատչյան և հայոց շարունակական կյանքի միակ թանձրացյալ Վկայությունը: Այն իր մեջ ամբողջացնում է միատարրացյալ ներկայությունը աստվածային շնորհի և մարդկային հավատարմության: Աստուծո կոչը և մեր հայրերի ձայնը միակյանքված խոսում են մեզ հետ այս Մյուռոնօրհնեքի միջից: Մյուռոնի Սրբալույս և Կյանքի խորհրդանիշ զմրուխտյա կանաչության արտացոլանքով մեր առջև պարզվում է հայության կյանքում Սուրբ Հոգու գործուն և զորութենական մասնակցության շարահարությունը՝ վերաիմաստավորված մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարդացմամբ, որը Ս. Գրիգոր Լուսավորչի ճգնությամբ ու տառապանքով, սահակ-մեսրոպյան սխրանքով, վարդանանցների խիզախումով, գետադարձյան հեղումներով դարձավ մեր ազգային հարազատ, սեփական դիմապատկերն ու նկարագիրը:

Այո՛, դարձավ, բայց դարձնե՛նք նաև այսօր:

Վեհափառ Հայրապետի՝ նախքան Մյուռոնօրհնեքը հայրական խոսքը, որ ներքին՝ հոգևոր պատրաստության հրավեր է, հենց այս է թելադրում մեզ. «**Ս. Մյուռոնը առնչել կյանքին**»: Թող այն չմնա սոսկ մեր ճակատի, աչքերի, ունկերի, շրթունքների, ձեռքերի, սրտի, ոտքերի և թիկունքի վրա շքեղորեն փայլող յուղ օծության, որպես «***հանդերձ ի վերայ մարմնոյ***», այլ տերունական կնիքով վերածենք և նրանով վերածվենք երկնավոր պարգևների բաշխման, աստվածտեսության, աստվածլսելության, աստվածխոսության, Հոգու բուրմունքի, բարեգործության, վահան ամրության և հավիտենական կյանքի հավերժագնացության սրբազան առիթի՝ ունենալով «***իբրեւ զգոյն մորթոյ***»:

Քրիստոնեության երկհազարամյա պատմության մեջ շուրջ 1700 տարիներ ապրող և ստեղծագործող մեր ժողովրդի համար յուրահատուկ տեղ ունի այս Մյուռոնօրհնեքը: Դժվար է հիշել, թե քանի անգամներ է Հայոց Մյուռոնը օրհնվել Հայրենիքի անկախ պետականության պայմաններում: Հինգ տարիներ առաջ Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի ձեռամբ օրհնված Մյուռոնը կոչվեց «***Անկախության Մյուռոն***», որով կարծես սրբագործվեց և օծվեց Հայոց նորածին ազատությունն ու անկախությունը: Իսկ այսօր, երբ այդ պետությունը արդեն հինգ տարիներ շարունակ տառապանքով ու տքնանքով առաջ է ընթանում, Գարեգին Վեհափառը նորօրհնյալ Մյուռոնը կոչեց «***Վերածննդյան Մյուռոն***»:

Կանգնած ենք մեր քրիստոնեական պատմության երրորդ հազարամյակի առջև. ի՞նչ են մեր անհատական և հավաքական խոհերը, խորհրդածությունները, հոգսերն ու նպատակները: Սակայն ինչ և ինչպիսին էլ լինեն, պարուրենք դրանք ոչ միայն Մյուռոնի խորհրդով, այլև Մյուռոնի՝ Սուրբ Հոգու գործերով: Եվ Աստուծո անձեռակերտ տաճար Հայաստան աշխարհի ծննդյան ավազան տեսլականույց Սուրբ Էջմիածնի՝ դեպի երկինք տանող ճանապարհով դառնանք

«***Մյուռոնված ժողովուրդ՝ Մյուռոնելի առաքելությամբ***»: